

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ**

Նարեկ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտական ինստիտուտի հայցորդ

Ռոման ՀԱԿՈՐՉԱՆՅԱՆ

ՀԱԱՀ Հաշվ. հաշվառ. և աուդիտ ամբիոնի դասախոս, տ.գ.թ.

Բանալի բառեր. Ինովացիոն համակարգ, տարածքային ինովացիոն համակարգ, վենչուրային կապիտալ, մարդկային կապիտալ, զարգացվածություն, տարածքային տնտեսություն, գիտելիքահենք տնտեսություն

Գտնվելով գիտելիքահենք տնտեսության պայմաններում, անհարժեշտություն է առաջանում տնտեսությունն ամբողջովին դիտարկել այդ համատեքստում, ընդգրկելով նաև տարածքային տնտեսությունը: Գաղտնիք չէ, որ այսօր տարածքային տնտեսության զարգացումն ամբողջ աշխարհում հանդիսանում է գերակա ուղղություն: Բացառություն չէ նաև ՀՀ-ն:

2011թ Կառավարության արձանագարության մեջ հստակ նշվում է. "Տարածքային զարգացման անհամաչափություններն այս կամ այն չափով բնորոշ են բոլոր երկրներին: Դրանք պայմանավորված են աշխարհագրական, բնակլիմայական, ժողովրդագրական և տնտեսական զարգացման վրա ազդեցություն ունեցող այլ գործոններով: Տարածքային զարգացման անհամաչափությունների խորացումը բնորոշ է հատկապես զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին: Ձարգացման այս փուլում մեր երկրի համար հատկապես կարևորվում է այնպիսի քաղաքականության մշակումն ու կիրառումը, որը ոչ միայն չի խորացնում զարգացման անհամաչափությունները, այլ նաև տարածքների համաչափ զարգացում է ապահովում"¹: Իսկ ԳՀՏ-ն այսօր հանդիսանում է այն լավագույն և միգուցե միակ տարբերակը, որի միջոցով հնարավոր է նպաստել ՀՀ տարածքային զարգացմանը և այն դարձնել մրցունակ:

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ գիտելիքահենք տնտեսությունը զգալի ազդեցություն է թողնում տարածքային տնտեսության զարգացման վրա: Ճիշտ և արդյունավետ մոդելների ներդրումը տարածքային տնտեսության զարգացման հիմքում, ապահովվում է այդ տարածքների համաչափ զարգացումը: Իսկ տարածքային տնտեսության համաչափ զարգացման պայմաններում զարգանում է պետությունը, մարդկային կապիտալը, նվազում արտագաղթը և կենտրոնացման տենպերը:

¹ http://www.mta.gov.am/u_files/file/Hayecakarger/MAR25-38_1տարացքային-հայեցակարգ.pdf


Նոր տնտեսության համաձայն տարածքային տնտեսության ակտիվությունը պայմանավորված է կազմակերպությունների ակտիվության և նրանց միջև ակտիվ փոխգործունեության հետ, իսկ ինովացիոն և տեխնոլոգիական գործընթացներն էլ ավելի են ոլորացնում կազմակերպությունների միջև համագործակցությունը և նպաստում են տարածքային տնտեսության զարգացմանը²: Այսօր մարդիկ ստեղծում են տարբեր ինովացիոն համակարգեր, տեխնոպարկեր և միավորումներ այնպիսի տարածքներում ինչպիսիք են Սիլիկոնյան հովիտը, Լինչյոպինգը Շվեդարիա և այլն: Տարբեր գիտնականներ և քաղաքական գործիչներ համարում են, որ առանձին մարզեր և կլաստերներ ունեն բիզնես այնպիսի հատկություններ, որոնցով կարող են ստեղծել ինովացիոն համակարգեր և նպաստել մարզերում գործազրկության կրճատմանը և տնտեսության զարգացմանը: Որոշ մարզեր ունեն այնպիս ռեսուրսներ, որոնք կարող են ազդել գիտելիքահենք տնտեսության ձևավորման վրա և ինովացիոն համակարգերի շնորհիվ ապահովել տարածքային զարգացվածությունը: Ինովացիոն համակարգերը նպաստում են գիտության դերի մեծացմանը տնտեսության և արտադրական պրոցեսների մեջ, դրանով իսկ նպաստելով ԳՅՏ զարգացման գործընթացին: Առանձնացվում են Ինովացիոն մոդելների մի շարք ձևեր:

Տարածքային տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն է թողնում տարածքային ինովացիոն համակարգը (ՏԻՅ), որը ըստ էությանը արտահայտում է տեխնոպարկերի, գիտահետազոտական կենտրոնների վեներալային հիմնադրման և ԳՅՏ այլ կարևոր գործոնների ամբողջությունը տարածքային տնտեսության մասշտաբով: Ինովացիոն համակարգը ընդունված է բաժանել 3 հիմնական մասերի, զծապ 1: Միջազգային ինովացիոն համակարգ (ՄԻՅ), Ազգային ինովացիոն համակարգ (ԱԻՅ) և Տարածքային ինովացիոն համակարգ (ՏԻՅ)³: Բնականաբար այս բոլոր մակարդակներն իրենց ազդեցություն են թողնում ԳՅՏ զարգացման վրա, Սակայն պետք է կարևորել ազգային և տարածքային ինովացիոն համակարգերի առկայությունը: ԱԻՅ-ի դեպքում ապահովվում է երկրի ինովացիոն համակարգի, միևնույն ժամանակ ԳՅՏ-ի զարգացումը, ՏԻՅ-ի պարագայում նախադրյալներ են ստեղծվում ԱԻՅ համար միևնույն ժամանակ նպաստելով տարածքային տնտեսության զարգացմանը: Այսինքն ՏԻՅ-ը նպաստում է ԱԻՅ-ի զարգացմանը, իսկ ԱԻՅ-ն իր հերթին նպաստում է ՏԻՅ-ի կայացմանը:

² Peter Svensson, “The Dynamics of Innovation and Knowledge-Based Regional Development” Linköping, Sweden, 2010, p.18

³ Աղբյուր Jung Duk Lim, Regional Innovation System and Regional Development :Survey and a Korean case, Pusan 2006, p. 4


Գծապատկեր 1. Ինովացիոն համակարգերի մակարդակները



Տարածքային ինովացիոն տնտեսության առավելությունը կայանում է եզակի տեղական գիտելքի բազայի առկայությամբ, ընդհանուր արտադրական միջոցներով, մատչելի աշխատուժի և սոցալ-մշակութային տարրերի առկայությամբ և ազդեցությամբ: Այս գործոնները լրացուցիչ դիվիդենտներ են տալիս գիտահետազոտական կազմակերպություններին և վեցնչության հիմնադրամներին, որոնք նպաստում են տարածքային ինովացիոն համակարգի ստեղծմանը գծ. 2: Քուկը և Շիենստոկը նկարագրել են տարածքային ինովացիոն համակարգն որպես աշխարհագրական միավոր: Պայմանավորված աղմինիստրատիվ և այլ գործոններով՝ այն նպաստում է ինովացիոն և գիտակրթական հաստատությունների զարգացմանը, որոնք հետագայում համագործակցում և ուժեղ ազդեցություն են թողնում տարածքային տնտեսության զարգացման վրա⁴: ՏԻՅ-ն իրենից ներկայացնում է մի շարք գործոնների և գործողությունների ամբողջություն: Այս մոդելը ցույց է տալիս թե ինչպես է ՏԻՅ-ը գործում և ինչ ազդեցություն կա նրա և այլ գործոնների միջև: Կարևոր գործոններ են ազգային և միջազգային կազմակերպությունների քաղաքականությունը, նրանց ինովացիոն համակարգերը և այլ ՏԻՅ-երի ազդեցությունը համակարգի վրա:

⁴ Peter Svensson, “The Dynamics of Innovation and Knowledge-Based Regional Development” Linköping, Sweden, 2010, p.19

Գծապատկեր 2. Տարածքային ինովացիոն համակարգ



Մոդելում հստակ արտացոլվում են տարբեր մակարդակներում ՏԻՀ-ի զարգացմանը նպաստող գործոնների առկայությունը և ազդեցությունը ընդհանուր համակարգի վրա: Մոդելի կենտրոնական հատվածը զբաղեցնում են կլաստերային կառույցները, իսկ դրա զարգացման և ռեսուրսների ապահովման գործը կատարում է գիտակրթական համակարգը: Մյուս կողմից մոդելի զարգացման համար անհրաժեշտ են բարենպաստ քաղաքական միջավայր, ֆինանսական միջոցներ, որոնք հանդես են գալիս վեցնչության հիմնադրամների տեսքով: Առանձին դերակատարություն են ստանձնում նաև ՏԻՄ-երը: Սիլիկոնյան հովիտի հիմքում ընկած է հենց այս մոդելը: Ինովացիոն համակարգն ունի 6 հիմնական գործառույթ կամ նպատակ.

1. Զարգացնել և տարածել գիտությունը,
2. Ազդել հետազոտությունների ուղղվածության վրա,

3. Իրականացնել ձեռնարկատիրական հետազոտություններ,
4. Նպաստել շուկայի ձևավորմանը,
5. Օրինականացում
6. Համախմբել ռեսուրսները:

ՏԻՀ-երի զարգացման վրա ազդեցություն կարող է թողել նաև մարզերի գիտական պոտենցիալը, դրանց մարդկային կապիտալը և ներգրավվածությունը տարբեր բնագավառներում, ինչպես նաև տարբեր մարզերում որևէ հստակ ոլորտի զարգացվածության աստիճանը և դրա զարգացման դինամիկան: Կազմակերպությունների կլանման հակավածությունը միշտ տանում է նրան, որ կազմակերպությունները փորձում են կլանել նոր տեղեկատվություն, գիտելիք, մարդկային կապիտալ, ինչը բերում է տարածքային զարգացվածության ի հաշիվ ռեսուրսների օգտագործման և նոր ռեսուրսների ներգրավման: Այդ հատկությունը նպաստում է առանձին գործող ոլորտներին և ճյուղերին միավորվել մեկ համակարգի մեջ և աշխատել ի նպաստ մեկ նպատակի, տվյալ պարագայում տարածքային տնտեսության զարգացմանը: Նման գործունեության արդյունքն է Հարվարդի համալսարանը, Մասչուսեթսի համալսարանը, Քեմբրիջի համալսարանը և այլն: Վերլուծելով ՏԻՀ էությունը, նրա հիմնական գործառույթները և գործոնները, կարող ենք ասել, որ համակարգի ներդրումը տնտեսության մեջ կնպաստի տարածքային զարգացվածությանը: Օգտագործելով տարածքային տնտեսության առավելությունները և նրա ընձեռած հնարավորությունները, ՏԻՀ կարող արձանագրել բավականին լուրջ հաջողություններ: Իսկ ՏԻՀ-ի ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ գործոնների առկայությունը տարածքային տնտեսությունում առաջ կբերի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանը: Ելնելով ՏԻՀ-երի հիմնական նպատակներից, կարելի է նշել, որ նրանց զարգացման զուգահեռ կսկսի զարգանալ գիտակրթական կյանքը մարզերում, ինչը կհանգեցնի առավել որակյալ կադրերի պատրաստմանը: Նոր կազմակերպությունների հիմնումը, կնպաստի մարզերում նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործարկության և աղքատության ու միգրացիոն գործընթացների կրճատմանը, կազմակերպությունների ավելի արդյունավետ և արագ զարգացմանը, մարզերին կապահովի լրացուցիչ կապիտալով, ինչը կմեծացնի տվյալ մարզի տնտեսական ակտիվությունը: Վերոնշյալ բոլոր գործառույթները և գործոնները գիտելիքահենք տնտեսության հիմնական շարժիչ ուժերն են: Ջարգացման մեծ մոդելի կարևորությունն այն է, որ ՀՀ մարզերը չունենալով հարուստ բնական ռեսուրսներ, զարգացած արտադրական ռեսուրսներ, ինովացիոն համակարգի ներդրման շնորհիվ կարող են ընտրել համապատասխան ինովացիոն համակարգ և նպաստել տարածքային տնտեսության զարգացմանը գիտելիքահենք տնտեսության շնորհիվ:

Նարեկ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ, Ռոման ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ
Տարածքային տնտեսության զարգացման հնարավորությունները
տարածքային ինովացիոն համակարգի միջոցով

Բանալի բառեր. տարածքային ինովացիոն համակարգ, վենչուրային կապիտալ, մարդկային կապիտալ, զարգացվածություն, գիտելիքահենք տնտեսություն

Այսօր մարդիկ ստեղծում են տարբեր ինովացիոն համակարգեր, տեխնոպարկեր և միավորումներ այնպիսի տարածքներում ինչպիսիք են Սիլիկոնյան հովիտը, Լինչոպինգը Շվեդիայում և այլն: Տարբեր գիտնականներ և քաղաքական գործիչներ համարում են, որ առանձին մարզեր և կլաստերներ ունեն բիզնես այնպիսի հատկություններ, որոնցով կարող են ստեղծել ինովացիոն համակարգեր և նպաստել մարզերում գործազրկության կրճատմանը և տնտեսության զարգացմանը: Որոշ մարզեր ունեն այնպիսի ռեսուրսներ, որոնք կարող են ազդել գիտելիքահենք տնտեսության ձևավորման վրա:

Narek SARATIKYAN, Roman HAKOBIANYAN
Regional development through regional innovation system

Key words: Innovation system, regional innovation system, venture capital, human capital, development, regional economy, knowledge-based economy

People create new technologies and innovations endogenously in such diverse geographical regions as Silicon Valley and Linköping, Sweden. Academics and policymakers both recognize that specific regions or clusters of businesses have a superior capability for engaging in innovative activities and new business formation and for experiencing high regional employment growth. Some regions possess greater social capital and special institutions that can increase the likelihood of new entrants emerging and succeeding in the market. A framework has developed for studying regional innovation systems and understanding its mechanisms.

Нарек САРАТИКЯН, Роман АКОБДЖАНЫН
Региональное развитие через региональную инновационную систему

Ключевые слова: инновационная система, региональная инновационная система, венчурный капитал, человеческий капитал, развитие, региональная экономика

Люди создают новые технологии и инновации эндогенно в таких разнообразных географических регионах, как Силиконовая долина и Линчепинг, Швеция. Ученые и разработчики политики признают, что конкретные регионы или кластерные бизнесы обладают превосходными возможностями для участия в инновационной деятельности и формировании нового бизнеса, а также для роста занятости в регионах. Некоторые регионы обладают большим социальным капиталом и специальными институтами, которые могут повысить вероятность появления новых и успешных участников на рынке. Разработана структура для изучения региональных инновационных систем и понимания ее механизмов.